XVII Դ. ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ «ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ» ՄԵՋ

ԱՐՄԵՆ ՎԻՐԱԲՅԱՆ

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և վարչաքաղաքական կյանքի կենտրոն Երևանի խանության պատմության ուսումնասիրությունը կարևոր է հայ պատմագիտության համար: Խանությունը 1428 թ. թուրքմենական ցեղերի առաջնորդ Ամիր - - Սաադի անունից ստացել էր «Չուխուր Սա'դ» («Սաադի փոս») անունը[1]: Այն սկզբնապես զբաղեցնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի գրեթե ամբողջ տարածքը[2]: Խանության տարածքը XVI դ. բավականին կրճատվեց՝ կորցնելով Ախուրյան գետից և Հայկական պարից դեպի արևմուտք ու հարավ ընկած շրջանները[3]: Խանությունը XVII դ. ևս գտնվում էր պատմական բուռն իրադարձությունների հորձանուտում: Այն գլխավորող խաների գործունեության ուսումնասիրության համար անգնահատելի ծառայություն է մատուցում Զաքարիա սարկավագ Քանաքեռցին, որի «Պատմագրութիւն»-ը չնչին բացառումներով վստահելի սկզբնաղբյուր է: Պատմիչն իբրև անաչառ ականատես ձգտել է բացատրել իրադարձությունների պատճառները, ներկայացնել Երևանի խաների գործունեության մանրամասները, որոնք երբեմն այլ հեղինակների մոտ չեն հանդիպում, տալ նրանց կերպարի դրական և բացասական կողմերը: Ուստի, պատահական չէ, որ XVII դ. Երևանի խանության և առհասարակ Արևելյան Հայաստանի պատմության ուսումնասիրությամբ զբաղված հետազոտողները հաճախ իրենց գիտական եզրահանգումները կատարել են՝ հենվելով Զաքարիա Քանաքեռցու վկայությունների ու դատողությունների վրա[4]: Յավոք, պատմիչը հետևողականորեն չի մոտեցել խաների կառավարման պատմական ժամանակագրությանը:

Ինչպես և պետք էր սպասել, Երևանի Զաքարիա Քանաքեռցու առաջին տեղեկությունները վերաբերում են Ամիրգունա խանին (1604 – 1626), որին 1604 թ. հունիսին պարսիկների կողմից Երևանի բերդը

---

[1] *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրեր, պրակ I (ԺԴ - ԺԶ դդ.), կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, էջ 61, G.* B o u r n o u t i a n. Eastern Armenia in the Last Decades of Persian Rule 1807 – 1828. California, 1982, p. 20.

[2] *Հ. Փ ա փ ա զ յ ա ն. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.).– ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1960, -7-8, էջ 25:*

[3] *Հ. Փ ա փ ա զ յ ա ն. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.).– ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1973, -6, էջ 25:*

[4] *Հ. Փ ա փ ա զ յ ա ն. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.).– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, -1, էջ 29 – 44, Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Երևանի պատմությունը (1500 – 1800 թթ.), Երևան, 1971, Լ. Ե ռ. Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1969, Ե. Շ ա հ ա զ ի զ. Հին Երևանը, Երևան, 2003:*

թուրքերից գրավելուց հետո շահ Աբբաս Ա-ը նշանակել էր Երևանի խան[5]: Ամիրգունա խանի մասին պատմիչը բավական դրական է արտահայտվում՝ անվանելով «Այր քաջ՝ և սրտապինդ՝ և արի ի պատերազմունս, անահ և աներկիւղ, շէնարար և սիրող քրիստոնէից»[6]: Հարկ է նշել, որ Առաքել Դավրիժեցին ևս դրական գույներով է ներկայացնում խանին՝ նրան անվանելով «մեծ և հզոր իշխան»[7]: Ի տարբերություն Քանաքեռցու և Դավրիժեցու՝ Սիմեոն Երևանցին բացասական է բնութագրում Ամիրգունային՝ նշելով, որ «Ամիրկիւնէ խանս զաւթեալ ուտէ զգեօղս մեր…»[8]: Պատճառը խանի կողմից Էջմիածնին պատկանող հողերի բռնազավթումն է: Իսկ 1608 թ. հիշատակարաններից մեկում և XVII դ. անանուն մի ժամանակագրության մեջ Ամիրգունան բնորոշված է որպես սատանայի արբանյակ[9]:

Ի հաստատումն Ամիրգունայի դրական գնահատականի, Զաքարիա Քանաքեռցին պատմում է խանի շինարարական աշխատանքների և հայ գյուղացու հարկային բեռի թեթևացման մասին. «Սա, ի տիրելն իւրում Երևանայ, իսկոյն ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան: Նախ ըսկսաւ շինել զբերդն, և ապա ապարանս, և զայգիս, և զբուրատանս, և զպարտէզս, և հանել զառուս, և առաւելուլ զջուրսն: Այլ և ի տեղիս տեղիս թեթևացոյց զհարկն, և եբարձ զծանր լուծ ի պարանոցէ ռամկաց»[10]: Սակայն պատմիչի իսկ հաղորդմամբ երկրի կառուցապատումն իրականացվում էր գյուղացիների կոռի բարձրացման հաշվին[11]:

Ըստ Զաքարիա Քանաքեռցու՝ Ամիրգունա խանը, մտահոգված էր երկրի վերաբնակեցման և տնտեսության վերականգնման հարցերով և, չնայած տարիներ շարունակվող պատերազմին, այդ ուղղությամբ քայլեր էր կատարում: Նա մեծ եռանդով աշխատում էր վերաբնակեցնել հատկապես Երևանի շրջակայքում գտնվող ամայի գյուղերը: Այդ նպատակով խանն արշավանքներ կատարեց դեպի Էրզրումի, Վանի ու Մշո շրջաններ և այնտեղից մեծ թվով հայեր բերելով՝ բնակեցրեց Արարատյան դաշտի ավերակ գյուղերում: Այդ մասին պատմիչը գրում է. «Քանզի Բ (2) անգամ գնաց ի գաւառն Կարնու, աւերեաց և գերեաց զերկիրն, և եհաս մինչ ի դուռն բերդին Արզրումոյ … և գնաց զկողմամբն Վանայ և Մշոյ. և գերեալ զնոսա՝ եբեր զգերիսն և բնակեցոյց ի նահանգսն որ ի մէջ Երևանու ի դաշտն»[12]:

Քանաքեռցու վկայությամբ՝ Ամիրգունան մասնակցել է նաև Վրաստանում Գիորգի Սահակաձեի բարձրացրած ապստամբության ճնշմանը և

---

[5] *Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 97:*

[6] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա ւ ա գ. Պատմագրութիւն (այսուհետև՝ Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ), հ. I, Վաղարշապատ, 1870, էջ 45:*

[7] *Ա ռ ա ք ե լ Դ ա ւ ր ի ժ ե ց ի. Գիրք պատմութեանց (այսուհետև՝ Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի), աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան,1990, էջ 245:*

[8] *Ս ի մ ե ո ն Ե ր և ա ն ց ի. Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 103:*

[9] *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601 – 1620 թթ.), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 291, Մանր ժամանակագրություններ XIII – XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 187:*

[10] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. I, էջ 46:*

[11] *Նույն տեղում:*

[12] *Նույն տեղում, էջ 60 - 61:*

ծանր վիրավորվել 1625 թ. հուլիսի սկզբին Մարաբդա գյուղի մոտ՝ Ալգեթ գետի ափին տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում[13]*: Ըստ նրա՝ «Նոյնպէս եւ Մովրաւն առեալ զզօրս Վրաց եւ հասեալ մօտ զօրացն Պարսից՝ ախոյեան միմեանց՝ ի վերայ գետնոյն՝ որ կոչի Ալգէթ. եւ ի զօրացն Վրաց էր այր մի յաղթամարմին՝ հաստանձն, լայնաճակատ եւ մեծագլուխ, քաջ ի պատերազմի. որոյ անունն էր Աղայ Թանկի. նա եղեւ առաջընթաց ի պատերազմի…Եւ ի նմին պատերազմի պատահեցան միմեանց Ամիրգունա խանն եւ Աղայ Թանկին. ասէ Ամիրգունա խանն, ա՛դաշ թափայ, - որ է քարեայ բլուր - ո՞ւր փախչիս. եւ առ ժամայն շարժեցին զթուրսն ի վերայ միմեանց ի միում քթթել ական: Նախ Աղայ Թանկին բերեալ զթուրն ի վերայ ձախ թեւին Խանին՝ եւ խոցեաց. նոյնպէս Խանն եւս ի վերայ ձախոյ յուսոյն վրացւոյ, որ եւ հատեալ ընկէց յերկիր, եւ ինքն մնաց կախեալ ի ձիոյն. եւ եկեալ պաշտոնեայք նորա՝ առեալ տարան առ ինքեանս, եւ մեռաւ անդէն: Իսկ Ամիրգունա խանն եղեւ խոցեալ. եւ էր որդի նորա Թահմազ Բէկ ընդ նմա. որ եկեալ պատեաց զհայրն իւր՝ եւ առաքեաց յԵրեւան. եւ ինքն մնաց անդէն ընդ զօրս Պարսից»*[14]*: Զաքարիա Քանաքեռցու ուշագրավ հաղորդմամբ՝ Ամիրգունա խանին սպանում է որդին՝ Թահմասպղուլին, որպեսզի օր առաջ տիրանա Երևանի խանի պաշտոնին: Համաձայն պատմագրի՝ Թահմասպղուլուն աջակցում էր նաև պարսից արքունիքը. «Հրաման է ի մերում թագաւորութենէ առ քեզ Թահմա՛զ բէկ, զի թէ հայր քո մեռանի, թաղեա՛. եւ թէ կեցցէ, մի՛ կացցէ այդր, կամ գայցէ առ իս, եւ կամ նստցէ լռիկ. եւ դու արա՛ խանութիւն: Զայս իբրեւ լուաւ Թահմազն, իսկոյն եսպան զհայր իւր: Ոմանք ասեն՝ լարիւ խեղդեաց, ոմանք ասեն՝ եդ բարձն ի վերայ բերանոյն, եւ նստաւ ի վերայ նորա, եւ շնչարգել արար, եւ մեռաւ»*[15]*: Սակայն Քանաքեռցին չի բացառում, որ Ամիրգունան վերքի պատճառով մահացած լինի: «Եւ ոմանք,– գրում է նա,– ասեն, իւրով մահուամբն մեռաւ ի խստութենէ վիրին: Քանզի բժիշկք ո՛չ կարացին բուժել: Վասնզի որքա՛ն դեղ դնէին, վէրն առաւելոյր, եւ ի կսկծոյն մեռաւ»*[16]*:*

Ինը տարի (1626–1635) իբրև խան պաշտոնավարած Թահմասպղուլու անձի վերաբերյալ ևս Զաքարիա ավականին դրական է արտահայտվում. «Էր նա գեղեցիկ պատկերօք, մեծակն յունակից, լայնաճակատ, թիկնեղ, փոքրաբերան եւ մանրատամն, քաղցրագրոյց, եւ համեղախօսք: Իրաւարար եւ ուղղադատ, ճշմարտասէր եւ անաչառ, սիրող քրիստոնէից: Զի միշտ գնայր ի տունս նոցա՝ ուտէր եւ ըմպէր, եւ ո՛չ

---

[13] *Ըստ Հ. Փափազյանի՝ Ամիրգունան 1625 թ. վիրավորվելուց 2 ամիս անց կնքում է մահկանացուն (Հ. Փ ա փ ա զ յ ա ն. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 33), սակայն Առինջում Հակոբ վարդապետի արտագրած Ավետարանի հիշատակարանում որպես Ամիրգունայի մահվան և Թահմասպղուլիի կողմից Երևանի խանի պաշտոնը զբաղեցնելու թվական նշված է 1626-ը (տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621 – 1640 թթ.), հ. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 226, Ն. Ա կ ի ն յ ա ն. Մովսէս Գ. Տաթեւացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 106):*

[14] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. I, էջ 29 – 30:*

[15] *Նույն տեղում, էջ 62 – 63:*

[16] *Նույն տեղում, էջ 63:*

խտրէր ի զէնլեացն քրիստոնէից, եւ ո՛չ յեփոդացն»[17]: Ըստ պատմիչի, Թահմասպղուլին մասնակցել է նաև հայերի հարսանիքներին, ինչը վերջիններիս հետ նրա սերտ հարաբերությունների մասին է վկայում:

Զաքարիա Քանաքեռցին նկարագրել է խանի արշավանքն Արևմտյան Հայաստանի քրդական աշիրաթների դեմ, որոնք անընդհատ ասպատակում էին Երևանի խանության սահմանամերձ շրջանները: Այդ արշավանքների պատճառած վնասների մասին վկայություն է տալիս նաև պատմիչ Գրիգոր Դարանաղցին[18]: Սակայն 1631 թ. կատարված այս իրադարձությունը Քանաքեռցին սխալմամբ վերագրում է Ամիրգունա խանի ժամանակին. «Զի որպէս ասացաք զխոցիլ Ամիրգունա-խանին ի պատերազմի Մովրաւին, եւ տանիլն յԵրեւան, եւ մնալն առ Ղօռչի-բաշին՝ Թահմազ-բէկի՝ որդւոյ նորա: Լուան ազգն Մարաց, որ է Քուրտ, յայնմ կողմանէն Մասեաց լերինն՝ ժողովեցան ի մի, եւ խորհեցան գալ ի դաշտն Շարուրայ՝ եւ առնել աւար: Եւ եհաս համբաւս այս առ Ամիրգունա-խանն: Վասնորոյ յղեաց առ որդին իւր Թահմազ-բէկ զպատգամս խիստս, եւ ասէ, աւուրք տառապանաց եւ օր նեղութեան հասին ի վերայ քո. արդ՝ որո՞ յ յուսոյ ակնունիս կալով այդր»[19]:

1632 թ., երբ շահ Սաֆին, մեծ թվով բանակի գլուխ անցած, փորձում էր Վրաստանում արյան մեջ խեղդել Թեյմուրազ թագավորի բարձրացրած ապստամբությունը, թուրքական մի նոր արշավանք ավերածության մատնեց Շիրակի դաշտն ու Ապարանի, Կարբիի և Գըրխբուլախի գավառները: Օգտվելով այն բանից, որ Թահմասպղուլի խանն իր զորքերով մասնակցում էր Վրաստանում մղվող կռիվներին՝ թուրքերին հաջողվեց խորանալ մինչև Կոտայք և կողոպտել այդ շրջանի հարուստ գյուղերը: Թուրքական հրոսակախմբերին հերոսական դիմադրություն ցույց տվեցին Եղվարդ գյուղի բնակիչները: Զաքարիա Քանաքեռցին այդ մասին գրում է. «Վասնորոյ ժողովեցան օսմանցիք և գնացին ի գաւառն Շիրակայ և Նգայ, և ի հիւսիսոյ կողմանէ Արայ լերինն գնացին ի գաւառն Կոտէից, և աւար առին զոր ինչ գտին. և եկին յԵղուարդ գիւղ. և պատեցին զամրոց նորա. և գեղականքն պատերազմեցան ընդ նոսա քարամբ: Իսկ օսմանցիքն տեսեցին մինչև սպասել քարանց նոցա»[20]: Շահը խանին թույլատրում է վերադառնալ Երևան և գլխավորել պայքարը թուրք կողոպտիչների դեմ: Թուրքերը, լսելով, որ Թահմասպղուլին վերադառնում է Վրաստանից, նահանջում են Աշտարակով Թալին, իսկ այնտեղից՝ Կարս[21]:

Քանաքեռցին մի տեղեկություն է հաղորդում, որի վրա հիմնվելով՝ կարելի է եզրակացնել, որ հայերը ևս պարսկական զորամիավորումների կազմում մասնակցել են թուրքերի դեմ ռազմական գործողություններին: Պատմելով Շիրակում օսմանցիների հետ Թահմասպղուլի խանի մի ընդհարման մասին՝ պատմիչը վկայում է, որ խանի հրամանով Երևան քաղաքից

---

[17] *Նույն տեղում, էջ 69:*

[18] *Գ ր ի գ ո ր Դ ա ր ա ն ա ղ ց ի. Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ (այսուհետև՝ Գ ր ի գ ո ր Դ ա ր ա ն ա ղ ց ի), Երուսաղէմ, 1915, էջ 298 – 299:*

[19] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. I, էջ 60:*

[20] *Նույն տեղում, էջ 85:*

[21] *Նույն տեղում:*

և Եղվարդ, Քանաքեռ, Նորագավիթ, էջմիածին, Օշական, Կարբի ու Հովհաննավանք գյուղերից խանական զորքի մեջ էին մտցվել ավելի քան 60 կորովի հայ հրացանավորներ. «Եւ ապա հրամայեաց զորականս առնել ի Հայոց, այսինքն՝ թուանքչի. և ժողովեցան աւելի քան զԿ (60), յԵղնարդայ և ի Քանաքեռոյ, յԵրևանայ, ի Նորագաւթայ, յէջմիածնայ, յՕշականոյ, յԱշտարակայ, ի Կարբոյ և ի Յովհաննուվանից, արք ընտիրք և կորովիք ի գործս թուանքչի. զնոսա և զօրս իւր առեալ՝ և եկեալ գնացեալ ի հիւսիսոյ կողմն Արագածոյ...»[22]: Հայերը, ինչպես տեսնում ենք, խանի մշտական զորքի մեջ չմտնելով հանդերձ, վարժ հրաձիգ լինելով, անհրաժեշտության դեպքում մասնակցում էին խանական զորքի մարտական գործողություններին: Խանին հաջողվում է փախուստի մատնել թուրքերին, հալածել մինչև Կարսի պարիսպները և բազմաթիվ գերիներով հետ դառնալ: Զաքարիա Քանաքեռցին գրում է, որ Թահմասպդուլին Կարս է ուղարկում քալանթար Մասումին՝ հրամայելով թուրքերին կոտորել, իսկ քրիստոնյաներին բերել Արարատյան դաշտ: Այդպիսով՝ վերջինս փորձում էր իր հոր նման բնակեցնել շահ Աբբաս Ա-ի կազմակերպած մեծ գաղթի պատճառով ամայացած Արարատյան դաշտը: Իսկ ինքը մեկ ուրիշ զորքով արշավում է Կաղզվան, ապա Բագրևանդ, որտեղի բնակիչներին ուղարկում է Վաղարշապատ: Հասնում է Կարնո գավառ, այնտեղից՝ Բասեն և Կարս՝ գերեվարելով բնակչության այն հատվածին, որը մազապուրծ էր եղել Մասումի արշավանքից: Ապա պատմիչը նշում է թուրքերի չդիմադրելու պատճառը: Դա, ըստ Զաքարիա Քանաքեռցու, Շապին Գարահիսարի շրջանում ջալալիների թվի մեծացումն էր: Կարինի փաշան սուլթան Մուրադի հրամանով զբաղված էր ջալալիների շարժումը ճնշելով, որի պատճառով պարսիկներին դիմադրություն ցույց չտրվեց: Իր աշխատության այս հատվածում պատմիչը մի փաստ է հաղորդում, որը մեզ հնարավորություն է տալիս պատկերացում կազմել պարսիկ խանների սպառազինության մասին: Զաքարիա Սարկավագի վկայությամբ Շիրակի ճակատամարտում Թահմասպդուլի խանը «զգեցեալ էր զզրեհն երկաթեայ՝ որ է գէյիմ, եւ զսաղաւարտն եդեալ ի գլուխն, եւ զկռնապանակն ի թեւն. եւ այնպէս ամրացուցեալ զինքն ամենայն պատրաստութեամբ. նոյնպէս եւ ունէր զզործի պատերազմին՝ զկապարճս լի նետիւք, եւ զթուրն՝ որ ասէին զիլֆդար, եւ լախտն, եւ զնիզակն, եւ արծաթեայ վահանն զթիկամբ, այսպէս եւ ագուցեալ էր զերիվարն՝ որ ասէին դազի գեր, զկշտապանակն, զսրտապանակն, եւ ոչ գոյր տեղի՝ որ ոչ էր ծածկեալ. եւ այսպէս զինեալ եւ մղեաց ընդ դէմ թշնամեացն»[23]:

Թահմասպդուլու պաշտոնավարումն ընդհատվեց 1635 թ. ամռանը՝ սուլթան Մուրադի կողմից Երևանի բերդի գրավումով: 7-օրյա պաշարումից հետո խանը դադարեցրեց դիմադրությունը և բերդի բանալիները հանձնեց սուլթանին: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ բերդի անկմանը նպաստել է խանի վեքիլ Մուրադ բեկի և այլ մերձավորների դավաճանությունը[24]:

---

[22] *Նույն տեղում, էջ 86:*

[23] *Նույն տեղում, էջ 86:*

[24] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա ւ ա գ. Պատմագրութիւն (այսուհետև՝ Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ), հ. II, Վաղարշապատ, 1870, էջ 4-6:*

Այս դեպքից հետո Թահմասպղուլին, ըստ պատմիչի, ապաստան է խնդրում թուրքերից և տեղափոխվում Թուրքիա՝ կալվածքներ ստանալով Կ.Պոլսի Սկյուտար արվարձանում:

Թուրքերի կողմից Երևանի գրավումը բնականաբար չէր կարող անարձագանք մնալ պարսիկների կողմից: Ըստ Զաքարիա Քանաքեռցու՝ 1636 թ. շահ Սեֆի Բ-ը (1629 – 1642) 100.000-ոց բանակով արշավում է Երևանի վրա[25]: Բերդի կայազորը՝ հրամանատար Մուրթուզա փաշայի ինքնասպանությունից հետո, հանձնվում է թշնամու ողորմածությանը: Պատմիչի վկայությամբ՝ թուրքական զորքը պարսիկների թողտվությամբ հեռանում է, սակայն հետապնդվում և ոչնչացվում նահանջի ճանապարհին[26]:

Այս իրադարձություններից հետո 1636 թ. Երևանի նոր խան է նշանակվում Քալբալին (1636 – 1639)[27], որը մինչ այդ Ֆարսի վիլայեթի Լառ քաղաքի հաքիմն էր[28]: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ Քալբալիի օրոք Երևանի խանությունը ենթարկվում է Քանան փաշայի գլխավորած Ղրիմի թաթարների 500 հոգանոց ջոկատի արշավանքին, որոնց սուլթան Մուրադ Դ-ը (1623 – 1640) հանձնարարել էր «գնալ ի կողմն Պարսից՝ առնել աւար և գերութիւն»[29]: Պտղունք գյուղի մոտ տեղի ունեցած առաջին ճակատամարտում խանական զորքը ջախջախվում է, իսկ խանը հազիվ է փրկվում գերվելուց: Սակայն շուտով, նախապես տեղեկանալով, որ թաթարները և նրանց միացած 300 թուրքերը տեղակայվել են Երևանի Քարահանք թաղամասում, Քալբալին անակնկալ հարձակումով պարտության է մատնում թշնամուն: Թաթարներից փրկվում են միայն 100 հոգի[30]:

Զաքարիա Քանաքեռցին, անցնելով Քալբալուն հաջորդած Զաղաթա Մահմադ խանի ժամանակաշրջանի նկարագրությանը (1640 – 1647), վերջինիս բնորոշում է հետևյալ կերպ. «կարի ազահ էր, և ոիշտ, և յափշտակող»[31]: Պատմիչի հաղորդմամբ՝ Զաղաթան չէր վճարում նույնիսկ պարսիկ զինվորականների աշխատավարձերը: Սա հանգեցրեց նրան, որ վերջիններս բողոքագիր գրեցին և Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի կնքելուց հետո ուղարկեցին շահին: Այստեղ հատկապես կարևոր է այն վկայությունը, որը վերաբերում է Արևելյան Հայաստանի պարսիկ պաշտոնյաների շրջանակներում էջմիածնի կաթողիկոսի զբաղեցրած դիրքին: Կաթողիկոսի հեղինակությունն այնքան մեծ էր, որ վերջինիս հետ հաշվի էր նստում նույնիսկ Պարսից շահը: Արդյունքում շահը պաշտոնազրկում է Զաղաթային, վերջինիս ուղարկում Սպահան և 1647 թ. խանի պաշտոնով Հայաստան

---

[25] *Նույն տեղում, էջ 11:*
[26] *Նույն տեղում, էջ 12:*
[27] *Նույն տեղում:*
[28] *Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 484, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 655:*
[29] *Նույն տեղում, էջ 16, հմմտ. Գ ր ի գ ո ր Դ ա ր ա ն ա ղ ց ի, էջ 578:*
[30] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 19 - 20:*
[31] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 38:*

ուղարկում ազգությամբ վրացի Խոսրովին[32] *(1647 – 1653), որի օրոք, պատմիչի վկայությամբ, քրիստոնյաների հարկերը թեթևացան, իսկ երթևեկության համար նախատեսված մաքսը վերացվեց*[33]*:*

Ապա Զաքարիա Քանաքեռցին պատմում է Խոսրով խանի իշխանազրկության և Մահմադդուլու՝ Երևանի նոր խան դառնալու մասին: Ըստ նրա՝ Խոսրովի թշնամիները վերջինիս մասին չարախոսում են շահի առջև: Շահը խանի գործողությունները վերահսկելու համար նրա տեղապահ է նշանակում Մահմադ անունով մեկին, որը և շուտով զբաղեցնում է Երևանի խանի պաշտոնը: Իսկ Խոսրովը շահի հրամանով մեկնում է Սպահան:

Մահմադդուլի խանի (1653 – 1659)[34] *պաշտոնավարության վերաբերյալ Զաքարիա Քանաքեռցին խիստ բացասական է արտահայտվում: Պատմիչը նշում է, որ խանը վերացրեց այն լավ բաները, ինչը ստեղծվել էր Խոսրով խանի օրոք՝ ծանրացրեց հարկերը, ճանապարհների վրա հարկ դրեց, բարձրացրեց ցորենի գինը և այլն: Հարկման դրվեցին արտերը, անասունների հոտերը, այգիները, սահմանվեց գլխահարկ: Այս ամենի կատարման վերահսկողությունը դրվեց խանի նշանակած պաշտոնյաների վրա*[35]*: Առաքել Դավրիժեցին ևս բացասական է արտահայտվում նորանշանակ խանի մասին. «Մահմադդուլի խանս էր այր գոռոզ և բռնագլուխ»*[36]*:*

Խանի հաջորդ թիրախը հայ եկեղեցին էր: Մասնավորապես արգելվեց եկեղեցիներում զանգեր հնչեցնելը: Զաքարիա Քանաքեռցին պատմում է, որ երբ Փիլիպոս կաթողիկոսը կառուցում էր Սուրբ Էջմիածնի զանգակատունը, իսկ Զաքարիա վարդապետը նորոգում էր Հովհաննավանքը, Մահմադդուլին խոչընդոտում էր այդ աշխատանքների կատարմանը՝ արհեստավորներին աշխատեցնելով իր կարիքների համար: Հետաքրքիր է, որ Զաքարիա Վաղարշապատցին, որը Հովհաննավանքի առաջնորդն էր, սկսեց պայքարել Մահմադդուլու եկեղեցահալած քաղաքականության դեմ, ինչն սկսեց տալ իր արդյունքները: Պատմիչի վկայությամբ՝ Զաքարիայի հենարանը հենց պարսիկ մեծամեծերն էին: Նույնիսկ Թիֆլիսի Ռուստամ խանը Վաղարշապատցու մերձավոր բարեկամն էր՝ «եղբայրացեալ էր նմա»[37]*:*

Շուտով Մահմադդուլին պաշտոնազրկվում է: Պատմիչի խոսքերով՝ խանը նույնիսկ ծեծի է ենթարկվում և արտաքսվում երկրից: Որպես ձերբակալության

---

[32] *Հ. Փափազյան. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ II (1601–1650 թթ.), Երևան, 1959, էջ 127:*

[33] *Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 38 - 39:*

[34] *Հ. Փափազյանը, օգտվելով Զաքարիա Ագուլեցու երկից, իր հոդվածում [Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 34–35] որպես Մահմադդուլու պաշտոնավարման տարիներ նշում է 1652–1656-ը: Սակայն, ըստ Ագուլեցու, Մահմադդուլին պաշտոնավարել է 1653–1660 թթ. տե՛ս Զաքարիա Ագուլեցի. Օրագրութիւն (այսուհետև Զաքարիա Ագուլեցի), Երևան, 1938, էջ 41 և էջ 56: 1660-ի փոխարեն խանի պաշտոնավարման ավարտը պետք է համարել 1659 թ., քանի որ, ըստ Զաքարիա Քանաքեռցու, նորանշանակ Նաջաֆղուլի խանի կառավարման ժամանակ՝ 1659 թ., մահացավ Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա Վաղարշապատցին. տե՛ս Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 58*):

[35] *Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 44 - 45:*

[36] *Առաքել Դավրիժեցի, էջ 277:*

[37] *Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 46:*

պատճառ պատմիչը նշում է Մահմադի կողմից հավաքած հարկերը շահի ուղարկած պաշտոնյային՝ Միրզա Իբրահիմին չհանձնելը[38]:

Մահմադդուլուն հաջորդում է Նաջաֆդուլի խանը (1659 – 1663), որին Զաքարիա Քանաքեռցին ընդհանուր առմամբ բացասական է վերաբերվում: Սկզբում, սակայն, պատմիչը դրական գույներով է ներկայացնում խանին. «և էր կարի խրոխտ և ահարկու»[39]: Ըստ պատմիչի՝ նորանշանակ խանի առաջին գործն է լինում Երևանի անհնազանդ պաշտոնյաների ձերբակալումը, որին աջակցում էր նաև շահ Աբբաս Բ-ը: Ձերբակալվում են 17 հոգի: Խանը սկզբում բարեկամական հարաբերություններ է հաստատում Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա Վաղարշապատցու և Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու հետ: Կարճ ժամանակ անց վիճակը փոխվում է: Նախ, 1659 թ. մահանում է Զաքարիան, ապա Գողթն է մեկնում Հակոբ Ջուղայեցին՝ Էջմիածնի պարտքերի համար հանգանակություններ կատարելու: Սրանից օգտվելով՝ խանը կնքել է տալիս Էջմիածնի ու Հովհաննավանքի մառանների և տնտեսական նշանակության այլ շինությունների դռները: Սակայն շուտով նա ուղղում է իր սխալը՝ տեղեկանալով, որ կաթողիկոսն իր բացակայության ընթացքում իրեն տեղակալ է նշանակել[40]: Նաջաֆդուլուն վերաբերող պատմության երկրորդ հատվածում, ի տարբերություն առաջինի, երբ վերջինս ներկայացվում էր դրական կողմերով, խանը պատկերված է որպես «անարի և երկչոտ»: Դա, թերևս, բացատրվում է նրանով, որ երբ լուրեր են տարածվում, թե թուրքերը Կարսից պատրաստվում են հարձակվել Երևանի վրա, խանը փախչում է Շամախի:

Զաքարիա Քանաքեռցու հաղորդմամբ՝ Նաջաֆդուլի խանից և կարճ ժամանակահատված պաշտոնավարած Ամիրգունայի որդի Աբբասից (1663–1666) հետո Երևանի խանի պաշտոնը ստանձնում է ազգությամբ լեզգի Սեֆիդուլի խանը (1666 – 1674): Վերջինիս պաշտոնավարման ընթացքում Էջմիածնի կաթողիկոսը Հակոբ Ջուղայեցին էր, որի հարաբերությունները խանի հետ ի սկզբանե լարված բնույթ ընդունեցին: Դրա հիմնական պատճառն Էջմիածնի պարտքերն էին, որոնք առաջացել էին Հակոբ Ջուղայեցու և Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթափցու հակամարտության պատճառով:

Սեֆիդուլի խանի պաշտոնավարման սկզբում Հակոբ Ջուղայեցին գտնվում էր Կ. Պոլսում: Էջմիածին այցելության ժամանակ խանը տեսնում է կաթողիկոսի կառուցած արհեստական լիճը և վերջինիս աթոռակալից պահանջում է լիճն իրեն հանձնել, բայց մերժում է ստանում: Կաթողիկոսի վերադարձից հետո խանը նույն խնդրով նորից է դիմում, բայց կրկին մերժվում է: Կաթողիկոսի պատճառաբանությունն այն էր, որ լիճն Էջմիածնի միաբանության հանգստարանն է: Կաթողիկոսարանի պարտքերը մարելու նպատակով Հակոբ Ջուղայեցին որոշում է դիմել շահին, սակայն խանը թույլ չի տալիս՝ խոստանալով պարտքը տեղում հավաքել: Իրականում Սեֆիդուլին վախենում էր, որ կաթողիկոսը կարող էր շահին բողոքել իրենից: Նույնիսկ բանը նրան հասավ, որ Սպահան մեկնող կաթողիկոսը

[38] *Նույն տեղում, էջ 46– 47:*
[39] *Նույն տեղում, էջ 57:*
[40] *Նույն տեղում, էջ 58:*

Աստապատ քաղաքից խանի ուղարկած զինվորների կողմից հետ դարձվեց: Խանի հրամանով Հակոբ Ջուղայեցին հսկողության տակ վերցվեց Երևանում: Երևանի մեծատուններից Էջմիածնի պարտքը հավաքելու խանի փորձերը ձախողվեցին: Նրան հաջողվեց հավաքել ընդամենը 1300 թուման՝ պայմանով, որ Էջմիածնի հոգևորականները հետո այդ գումարը պետք է վերադարձնեն: Քանաքեռցին այդ մասին գրում է. «Եւ ինքն ժողովեաց զամենայն փարթամ և մեծատուն մարդիկ, և էառ ի նոցանէ ՌՅ (1300) թուման դրամ. և պատճառ եդ՝ թէ աթոռին պարտն տամք, և յետոյ ձեզ հատուցեն Էջմիածնի նստօղքն»[41]:

Օգտագործելով Երևանի խանի և Հակոբ Ջուղայեցու անհաշտությունը՝ իրանահայ վանականները, գավառատերերն ու տանուտերերը, կաթողիկոսից հուսախաբ, աջակցում են Էջմիածնի պարտատերերին և գահընկեց հայտարարում նրան՝ կաթողիկոսական պաշտոնը հանձնելով Ջուղայեցու հակառակորդներից Օնոփրիոսին:

Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ Հակոբ Ջուղայեցուն շուտով հաջողվում է փախչել պատանդությունից և հասնել Սպահան: Սեֆիղուլին մարդիկ է ուղարկում՝ կաթողիկոսին գտնելու, բայց ապարդյուն: Նա ստիպված վանքերի առաջնորդների, գավառատերերի, մեծատունների մասնակցությամբ ժողով է հրավիրում: Այդ ժողովի անունից նամակ է ուղարկվում շահին, որում կաթողիկոսը մեղադրվում էր բազմաթիվ մեղքերի մեջ: Ժողովին մասնակցում էին կաթողիկոսից դժգոհ հոգևորականները և Էջմիածնի պարտատերերը, որոնք, բնականաբար, Հակոբ Ջուղայեցու հասցեին պետք է բացասական արտահայտվեին: Շահը նամակն ընթերցում է արքունի խնամակալի ներկայությամբ, որը ծանոթ էր Երևանի խանի ապօրինություններին: Շուտով արքունիք է գալիս նաև կաթողիկոսը և ներկայացնում Սեֆիղուլի խանի հետ ունեցած հակասությունները[42]: Շահի հրամանով խանը ձերբակալվում է, իսկ նրա պաշտոնը ժամանակավորապես ստանձնում է Սարուխանը (1674–1675):

Ազգությամբ լեզգի Սեֆիղուլի խանին հաջորդած ժամանակաշրջանը համընկավ Պարսկաստանում ստեղծված անկայուն վիճակի հետ: Երկրում սկսված տնտեսական ճգնաժամը վերաճում է քաղաքականի՝ հանգելով զանգվածային հուզումների ու ապստամբությունների:

Կենտրոնում ստեղծված անկայուն վիճակը, բնականաբար, չէր կարող չարձագանքել ծայրամասերում: Այս շրջանն Արևելյան Հայաստանի համար ևս աչքի է ընկնում մռայլ գույներով: Զաքարիա Քանաքեռցին այս ժամանակահատվածի մասին գրում է. «Այս Լ և Ը (38) ամ է զի հաշտութիւն է ի մէջ երկուց մեծամեծ թագաւորացն պարսից և տաճկաց վասն այնորիկ բազմացեալ և յոռացեալ են ազգն պարսից ուտելոյ և ըմպելոյ պարապեալ. վասն որոյ միշտ կեղեքեն և կեղեվեն ողորմելի կեանս քրիստոնէից»[43]:

Արևելյան Հայաստանում այս ծանր վիճակն ավելի էր բարդացնում տեղում իշխող պարսից պաշտոնյաների վարած սխալ քաղաքականությունը:

---

[41] *Նույն տեղում, էջ 78:*

[42] *Նույն տեղում, էջ 79 – 80:*

[43] *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1404, թ. 605բ – 606ա:*

Այս ընթացքում Երևանի խանի պաշտոնը ստանձնեց Թավրիզի Ռուստամ խանի որդին՝ Սեֆիղուլի խանը (1675–1679)[44]*՝ այդ պաշտոնում հաջորդելով ազգությամբ լեզգի իր անվանակցին: Նորանշանակ խանի պաշտոնավարման մասին Զաքարիա Քանաքեռցին խիստ բացասաբար է արտահայտվում. «Յետ կործանման Լակզի Սաֆի խանին՝ ապա առաքեցաւ յԵրևան Տեղապահ՝ ոմն Սարուխան բեկ անուն՝ ամս Բ. և Սաֆիղուլի խանն, որ էր որդի Ռոստամ խանին Թաւրիզու: Սա եկեալ նստաւ յԵրևան, և սկսաւ նորաբոյս չարիս գործել: …Այլ և բազմացան աւազակք ի ճանապարհի, և գողք ի շէնս. վասն այս պատճառի ո՛չ ոք կարէր գնալ ի ճանապարհ, զի կողոպտէին: Եւ ի բազում եկեղեցիս մտին գողք, և աւար առին: Եւ այսպէս կայր երկիրս ամենայն ի մէջ բազում տառապանաց»*[45]*:*

Խանից դժգոհ էին ոչ միայն Երևանի ու նրա շրջակա բնակավայրերի բնակիչները, այլ նաև պարսիկ պաշտոնյաները՝ խանական նոքարները: Վերջիններս այն ուժն էին, որի վրա հենվում էր խանական իշխանությունը: Իրենց ծառայության դիմաց նրանք ազատված էին հարկերից և ապրում էին ի հաշիվ գյուղացիներից գանձվող տուրքերի: Բացի այդ, նրանք առևտրական հարաբերությունների մեջ էին Երևանի խանության քրիստոնյա բնակչության հետ, ինչը նրանց համար եկամուտ էր ապահովում: Իսկ Սեֆիղուլի խանն իր հակաքրիստոնեական քաղաքականությամբ վնասում էր նաև խանության պարսիկ բնակչությանն ու պաշտոնավորներին: Այս հակասությունը, ի վերջո, վերածվում է հակախանական խռովության, որը գլխավորում էր Ֆաթալի անունով մեկը, որի մասին Զաքարիա Ագուլեցին գրում է. «Քանզի էլն (ժողովուրդը – Ա. Վ.) *երկու կողմն էր ճղված, ոմն՝ Ֆաթալիբէկի, ոմն՝ խանի»*[46]**:** *Այս խռովության մասին Զաքարիա Քանաքեռցին գրում է. «Վասնորոյ ժողովեցան ամենայն տաճիկք, և արարին խորհուրդ, և եդին գլխաւոր ինքեանց զոմն Ֆաթալի անուն, և անուանեցին զինքեանց Ղարափաչայ»*[47]*: Ապստամբները կալանեցին Սեֆիին և շահին նամակ ուղղեցին, ուր ներկայացված էր խանի վարած սխալ քաղաքականությունը, ինչը հանգեցրել էր խռովության բարձրացմանը: Քանաքեռցու հաղորդմամբ՝ Սեֆին կալանքի տակ մնաց այնքան ժամանակ, մինչև եկավ նոր խան: Դրանից հետո Սեֆիղուլին արտաքսվեց երկրից և հեռացավ Սպահան*[48]*:*

Սեֆիղուլի խանին Երևանի խանի պաշտոնում հաջորդում է մահմեդականություն ընդունած վրացի Զալ խանը (1679–1689): Զաքարիա Քանաքեռցին նրա վերաբերյալ դրական է արտահայտվում, «վասնզի ծնունդ քրիստոնէից էր, գթայր ի քրիստոնեայս»[49]*: Նախքան պաշտոնի ստանձնումը, Զալը, ծանոթանալով Երևանի խանության խնդիրներին, սկզբից ևեթ ձեռնամուխ եղավ դրանց լուծմանը: Առաջին խնդիրը Երևանի ու նրա շրջակա տարածքների հանցագործ խմբերի ձերբակալումն էր, ինչի մասին*

---

[44] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 87, Զ ա ք ա ր ի ա Ա գ ո ւ լ ե ց ի, էջ 122–123:*
[45] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 89:*
[46] *Զ ա ք ա ր ի ա Ա գ ո ւ լ ե ց ի, էջ 135:*
[47] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 88 - 89:*
[48] *Նույն տեղում, էջ 90:*
[49] *Նույն տեղում, էջ 103:*

պատմիչը գրում է. «Սա վարէր ամենայն գործն իշխանութեան. որ և հմուտ և տեղեակ էր ամենայն իրացն Երևանայ, և գիտէր և ճանաչէր զամենայն արսն Երևանայ, թէ ո՛վ ոք էին վնասակարք և աւերիչք Երևանայ… հրամայեաց ըմբռնել այր մի ազգաւ Ղաճար՝ ի ցեղէն որ ասի Քուրտ, որոյ անուն էր Հիմաթ-բէկ՝ Դ(4) որդուովքն, որոց անուանքն էին՝ Իսա-խան, Զաման-խան, Սալա-խան, Ղասիմ-խան. զի նոքա էին վնասակարք աշխարհին. զնոսա ըմբռնեալ՝ ետ կունդ ի պարանոց նոցա, և եդ ի բանտի. և յետ աւուրց առաքեաց առ Շահն. այլ ոչ ևս կարացին կալ հաստատ՝ թէպէտ և արձակեցան: Յետ սոցա ըմբռնեաց այր մի Այրումլու Տաշտամուր անուն. վասն զի յառաջին զանօրէիցն ապստամբեալ էր, և Զալս այս այլ հնարիւք իմն ըմբռնեաց զնա, և կախեալ ի ոտանէն՝ բրածեծ արարին այնքան՝ մինչև մերձ ի մահ լինել. և ապա արկին ի բանտ. և բազում տուգանս առին, և արձակեցին»[50]:

Զալի պաշտոնավարումը համընկավ հայ ժողովրդի համար ծանր ժամանակահատվածի հետ: Խոսքը վերաբերում է 1679 թ. հունիսի 4-ի Երևանի ավերիչ երկրաշարժին, որը մեծ կորուստներ պատճառեց խանության բնակչությանը: Զաքարիա Քանաքեռցին այդ մասին գրում է. «Ի թուին ՌՃԻԸ (1679) ի յունիս ամսոյ Դ(4)՝ աստուածասաստ բարկութիւն եղեւ ի վերայ երկրին Արարատեան. զի հայեցաւ աստուած բարկութեամբ յարարածս իւր. յետ Համբարձման Գ(3) շաբաթի աւուր յԷերրորդ ժամուն յանկարծակի գոռաց երկիր որպէս ամպքն. յետ գոռալոյն ահագին թնդմամբ շարժեցաւ. երկիրն Արարատեան առհասարակ դողայր եւ երերիւր»[51]: Որպես երկրաշարժի կենտրոն պատմիչը հիշատակում է Գառնի գյուղը, ապա թվարկում է ավերված տարածքները՝ հիմնական ուշադրությունը բևեռելով դրանցում ավերված հոգևոր հաստատությունների վրա. «և եկեալ շարժս այս ի կողմանց Գառնւոյ՝ և փլան ամենայն շինուածք և գեղեցկայարկ բնակութիւնք, և վանորայք, և եկեղեցիք: Այսոքիկ են աւերեալ եկեղեցիք, Աղչոց վանք, Այրի վանք, Հաւուց թառ, Տրդակերտն (Տրդատակերտն), Խորվիրապն, Զրվէզ, Զագավանք, երեք եկեղեցիք յԵրևան, Նորագաւիթ, Նորգեղ, Զորագեղ, Նորք, Գամրէզ. և բերդն Երևանայ ի հիմանց տապալեցաւ»[52]:

Զալ խանը, իր ու պարսկական պետության ընդհանուր շահերից ելնելով, պետք է շուտափույթ միջոցներ ձեռնարկեր՝ վերացնելու երկրաշարժի հետևանքները և վերականգնելու խանության տնտեսական բնական ընթացքը: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ խանը երկրաշարժից անմիջապես հետո օգնության խնդրանքով դիմում է շահին, որի հրամանով վերակառուցվում են ավերված եկեղեցիները և Երևանի բերդը[53]: Իսկ Քանաքեռի ավերված եկեղեցին վերակառուցելու համար Զալ խանը գյուղացիների հարկից կրճատում է 10 թուման[54]:

---

[50] *Նույն տեղում, էջ 102 – 103:*
[51] *Նույն տեղում, էջ 104:*
[52] *Նույն տեղում:*
[53] *Նույն տեղում, էջ 105:*
[54] *Նույն տեղում, էջ 103:*

Ըստ Զաքարիա Ագուլեցու վկայության՝ շահի հրամանով 1679 թ. հուլիսի 12-ին Երևան է գալիս Ատրպատականի կուսակալ Միրզա Իբրահիմը, որին հանձնարարված էր պետական միջոցներով կարճ ժամանակամիջոցում վերականգնել խաների աթոռանիստը՝ Երևանի բերդը: Հարկադիր աշխատանքի են քշվում տարբեր խանություններից բազմաթիվ մարդկանց, որոնց վարձն ամբողջությամբ կամ մասամբ տրվում էր տվյալ համայնքի կողմից: Միայն Ագուլիսից և Դաշտից Երևան հարկադիր աշխատանքի է ուղարկվում 23 մարդ: Այդ արտակարգ հարկադիր աշխատանքները շարունակվում են մինչև ցրտերն ընկնելը, որից հետո շահի հրամանով յուրաքանչյուրը վերադառնամ է իր տեղը՝ բերդի վերաշինությունը թողնելով կիսատ: Աշխատանքները շարունակվում և ավարտվում են հաջորդ տարիների ընթացքում[55]: Բերդից բացի, վերականգնվում են նաև եկեղեցիները, մզկիթները, կամուրջները, բնակելի տները: Այս մասին Զաքարիա Քանաքեռցին գրում է. «Եւ ապա եկն մեծ իշխան Միրզայ-Իպրահիմն, զոր ասէին Հատրբէճան-Վազրի, նստաւ յԵրևան. և կոչեաց զմերձակայ դանորայս, զՆախչուանայ, զՊարաւայ, զՁակամայ, զԼոռոյ, և զՍուլթանսն, զՄակուայ, զԱկուռոյ, զՈւտարակայ (գուցէ զԱշտարակայ), զԾարայ: Եւ եկին ստքա՝ և շինեցին զբերդն երեքորմեայ ամրագոյն քան զառաջինն: Եւ զկամուրճն՝ որ ի ներքոյ բերդին էր ի վերայ Հուրաստան գետոյ՝ որ ասի Զանկի, զնա ևս շինեցին ամրագոյն. և զառուքն՝ որք խափանեալ էին, նորոգեցին, և բերին զջուրն ի քաղաքն Երևան: Եւ ապա հաստատեցաւ կարգն Երևանայ ամենայն պիտոյիւք մարմնաւորօք՝ որքան և իշխէր սա Երևանայ»[56]:

Ըստ Զաքարիա Քանաքեռցու՝ Զալից հետո Երևան է գալիս Նախիջևանի Մահմադ - աղա խանի որդին՝ Մուրթուզաղուլին՝ խանի տեղապահի պաշտոնով (1689 – 1691): Պատմիչի խոսքերով վերջինս փորձում էր Երևանի խանության բնակիչների հարկերը թեթևացնելու և շահական արքունիքի մեծամեծերին կաշառելու ճանապարհով ստանձնել Երևանի խանի պաշտոնը: Սակայն, անհաջողություն կրելով, որոշում է կոդոպտել երկիրը: Պատմիչի խոսքերով՝ խանի պաշտոնավորները «ելեալ շրջեցան եւ կնքեցին զամենայն կարասս եւ զգուբս: Այլեւ գնացին ի լեռնային գաւառսն, ուր բնաւ ոչ գտանի գինի, եւ կնքեցին զպուտկունս մածնի եւ թանի»[57]: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ գավառապետերը ստիպված գյուղապետերից հավաքում էին պահանջված հարկը, ինչից հետո միայն տեղապահի արգելքները վերացվում էին:

Մուրթուզաղուլու երկու և կես տարվա պաշտոնավարումից հետո խանի պաշտոնը ստանձնում է Զոհրա խանը, ում մասին Քանաքեռցին անհայտ պատճառներով լռում է: Զոհրայի պաշտոնավարման վերաբերյալ տեղեկանում ենք Կարբիի արձանագրությունից, որտեղ որպես նորանշանակ խանի պաշտոնավարման սկիզբ նշված է 1691 թ. «Կամօքն մարդացեալ բանին Աստուծոյ և բարեխօսութեամբ և օժանդակութեամբ մաքուր ծնօղի իւրոյ կուսին Մարիամու, սկիզբն եղն շինութեան սրբոյ եկեղեցւոյս՝

[55] *Զ ա ք ա ր ի ա Ա գ ո ւ լ ե ց ի, էջ 143 – 144:*
[56] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 105:*
[57] *Նույն տեղում, էջ 134:*

որ յանուն սուրբ Աստուածածնի, ի գիւղաքաղաքին ի Կարբի՝ արդեամբք և գոյիւք խոջազատայ պարոն Այվազի ի թուականին հայոց ՌՃԽ (1691 թ.), ամին՝ ի թագաւորութեանն պարսից շահ Աւտուլլային, և ի բռնակալութեան երկրիս Արարատեան Զոհրա խանին…»[58]: Զոհրա խանի պաշտոնավարումը կարճ է տևել, քանզի 1693 թ. Կարբիի եկեղեցու շինարարության ավարտի մասին պատմող արձանագրությունում նշվում է, որ երկրում պաշտոնավարում էր նոր խան[59]:

Զոհրային հաջորդում է Երևանի հարկային ոստիկան Մահմադղուլին (1693–1696), որի մասին Զաքարիա Քանաքեռցին դրական է արտահայտվում: Ըստ պատմիչի՝ նորանշանակ խանը «բարութիւն ցուցեալ ամենայնի՝ եւ արար ուղղութիւն եւ սէր առ ռամիկ հարկատուքն. եւ ի բազում տեղիս թեթեւացոյց զհարկն եւ զձեռամաքս ի ճանապարհաց. եբարձ եւ զամենայն գոռս եւ աւազակս: Եւ հրաման արար եւ շինութեան եկեղեցեացն. եւ ի դատաստանի ճշմարտասէր եւ առանց կաշառաց: Եւ ոչ առաքէր հարկահանս յերկիրն, զի մի՛ նեղեսցեն զռամիկսն, այլ ինքեանք ժողովեալ առ սակաւ սակաւ հատուցեն: Եւ այսպէս կայր նա լաւութեամբ մինչ էր նա յԵրեւան»[60]: Զաքարիա Քանաքեռցու խոսքերով Մահմադղուլի խանից հետո «ոչ մնաց այնպիսի բարի այր»: Նորանշանակ խանը Ամիրգունայի թոռ Ֆարզալին էր, որի պաշտոնավարման վերջին շրջանի մասին պատմիչը չի հաղորդում՝ իր պատմությունն ավարտելով 1699 թ.[61] նույն խանի օրոք: Խանը պատմագրի կողմից ներկայացված է բացասական գծերով. «այր ագահ եւ ոիշտ, կողոպտող եւ գերփող, եւ կաշառօղ, անիրաւ ի դատաստանի, եւ կաշառօք թիւրէր զդատաստանն. յորժամ ոք զանգատէր յումեքէ, առանց քննութեան առնոյր տուգանս. որք մի փոդոյ տեղիք էին, նա Ի փող առնոյր. այսպէս ի-մա՛ զամենայն: Բազմացան եւ գողք ի շէնս եւ աւազակք ի ճանապարհս եւ յանդաստանս: Քանզի աւազակք համարձակ մտանէին ի փարախս խաշանց, եւ քշեալ տանէին. եւ գողք մտանէին ի գոմս, եւ զանասունս հանեալ տանէին աներկիւղ: Եւ թէ ըմբռնէին զգողսն՝ եւ տանէին առ իշխանն, եւ նա առնոյր տուգանս, եւ արձակէր առանց պատժոց. եւ նոքա գնային, եւ դարձեալ առնէին գողութիւն: Եւ էր տագնապ մեծ յաշխարհին Արարատեան: Եւ ի թուին ՌՃԽԸ (1699 թ.) այսպէս է՝ զոր գրեցաք, եւ ապագայն Աստուած գիտէ»[62]:

Երևանի խաների մասին Զաքարիա Քանաքեռցու հաղորդած տեղեկություններն ամփոփելով (որոշներն էլ զուգահեռելով այլ պատմիչների թողածներով)՝ կարելի է արձանագրել, որ վերջիններիս գործունեության դրական կամ բացասական կողմերը մեծամասամբ պայմանավորված են եղել ոչ միայն խանական համակարգի անկատարությամբ, այլև այդ պաշտոնը զբաղեցնող անհատների մարդկային ու գործնական հատկանիշներով: Այստեղ հատկանշական է Ե. Շահազիզի հետևյալ խոսքերը. «Եղել են, իհարկե, լավ ու վատ խաներ, բայց լավի ու վատի տարբերությունը նրանց ընդհանուր կառավարչության և գործունեության սիստեմի փոփոխության մեջ չի եղել, այլ ի-

---

[58] *Հ ո վ հ. ե պ ս. Շ ա հ խ ա թ ո ւ ն ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 116 – 117:*

[59] *Նույն տեղում, էջ 117:*

[60] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 135:*

[61] *Հ. Փափազյանը վրիպմամբ նշում է 1698 թ. տե՛ս Հ. Փ ա փ ա զ յ ա ն. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.), էջ 40:*

[62] *Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 135:*

րենց հպատակների վերաբերմամբ ունեցած վերաբերմունքի, նրանց բարի ու չար լինելու հատկության, նրանց վարած անզործ ու գործունյա կյանքի եղանակի մեջ»[63]*:*

ДЕЎЯТЕЛЬНОСТЬ ЕРЕВАНСКИХ ХАНОВ В XVII в. ПО «ХРОНИКЕ» ЗАКАРИЯЎ САРКАВАГА КАНАКЕРЦИ

АРМЕН ВИРАБЯН

Р е з ю м е

С точки зрения исследований истории ереванского ханства XVII в. велика роль Закария Саркавага Канакерци (дьякона). Историк в своей «Хронике» представляет правление ереванских ханов в 1604–1699 гг. (конец «Хроники»). Исключение составляет Зохра хан (1691–1693), о котором по непонятным причинам Закарий Канакерци умалчивает. Он ссылается на социально-экономическую политику Амиргуна (1604–1624), Тахмаспхули (1626–1635), Калбали (1636–1639), Джагата Махмада (1639–1647), Хосрова (1647–1653), Махмадхули (1653–1659), Наджафхули (1659–1663), Аббаса (1663–1666), Сафихули (по национальности лезгин) (1666–1674), Сарухана (наместник) (1674–1675), Сафихули (1675–1679), Зала (1679–1689), Муртузахули (наместник) (1689–1691), Мухамедхули (1693–1696) и Фарзали (1696–?) ханов, а также описывает их личное поведение, их отношения с армянской церковью и с населением ереванского ханства. Будучи современником событий, он стремится объяснить их причины, выразить свое собственное отношение к положительным и отрицательным сторонам ханов.

THE ACTIVITY OF YEREVAN KHANS IN THE 17th CENTURY IN ZAKARIA SARKAVAG KANAKERTSI'S "CHRONICLE"

ARMEN VIRABYAN

S u m m a r y

From the point of view of research of the history of Yerevan khanate in the 17th century an important part belongs to Deacon Zakaria Kanakertsi. In his "Chronicle" the historian presents ruling of Yerevan khans during 1604–1699 – the end of his history. The exception includes Zohra khan (1691 – 1693), about whom Zakaria Kanakertsi keeps silence for unknown reasons. He refers to social - economical policy of Amirguna (1604–1624), Tahmaspguli (1626–1635), Calbali (1636 – 1639), Jagata Mahmad (1639–1647), Khosrov (1647–1653), Mahmadguli (1653–1659), Nadjafguli (1659–1663), Abbas (1663–1666), Safiguli (Lezghin by nationality) (1666–1674), Sarukhan (deputy) (1674–1675), Safiguli (1675–1679), Zal (1679–1689), Murtuzaguli (deputy) (1689–1691), Mahmadguli (1693–1696) and Farzali (1696 – ?) khans. Besides he refers to their personal behaviour, relationships with Armenian church and with the population of Yerevan khanate. Being a loyal witness he tends to explain the reasons of the events, to express his personal attitude to positive and negative sides of the khans.

[63] *Ե. Շ ա հ ա զ ի զ. նշվ. աշխ., էջ 115:*